

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
վիճակագրության պետական խորհրդի նիստի

24.12.2007թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու. Պողոսյան, Ս. Դավթյան, Ա. Շաբոյան, Ա. Աղազարյան (*Խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Զ. Միրզոյան (նախագահի գլխավոր խորհրդական), Վ. Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ն. Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Ա. Սաֆյան, (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ.Գյուրջյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող` Ն. Մուշեղյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2005 և 2006 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրերով ամփոփված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խմբի ղեկավար Հ. Մարգարյանյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող` Գ.Գևորգյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 04.12–06.12.2007թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի և ԵՎրոպայի Տնտեսական Հանձնաժողովի «Միջազգային միգրացիայի վիճակագիրություն» տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող` Գ.Գևորգյան/

4. Այլ հարցեր:

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող` Ն. Մուշեղյան/

Որոշեցին՝

Հաստատել «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2005 և 2006 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրերով ամփոփված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խմբի ղեկավար Հ. Մարգարյանյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող` Գ.Գևորգյան/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խմբի ղեկավար Հ. Մարգարյանյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից, 2005 և 2006 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրված տվյալների բազաները՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հաղորդումը արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Շվեյցարիայի Ժնև քաղաքում 04.12–06.12.2007թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի և Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի «Միջազգային միգրացիայի վիճակագրություն» տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ